

Այլազեանի, Հոգչ. Տ. Պարէա Արզ. Երկնանի եւ  
Հոգչ. Տ. Ջարեհ Արզ. Թոփայեանի: Արարողու-  
թեանց խորատուիական էր Գեղչ. Տ. Կիրեկ Ս. Վրդ-  
Պարիկեան:

\* Կիր. 17 Նոյմ.— Ս. Պատարազը մատուցուե-  
ցաւ ի Ս. Յակոբ: Ժամաբարն էր Հոգչ. Տ. Կարեկ  
Արզ. Մարֆազէիան:

\* Ուր. 22 Նոյմ.— Ս. Հրէշտակապետաց Կաթա-  
տանակը պաշտուեցաւ Համանան եկեղեցիին մէջ:  
Հանդիսապետն էր Գեղչ. Տ. Նորայր Եպիսկոպոս  
Պողոթեան:

\* Եր. 28 Նոյմ.— Տոն Ս. Հինշտակապետաց  
Գարրիկիի եւ Միխայիլի: Առաւտեան ժամաբարու-  
թիւնը պաշտուեցաւ եւ Ս. Պատարազը մատուցուե-  
ցաւ ի Ս. Հրէշտակապետ: Ժամաբարն էր Հոգչ. Տ.  
Սեւան Արզ. Ղարիպեան: Ապա, ըստ սովորութեան,  
կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտոն՝ ազգային  
բարեբարունհի Ազաւերի մէջահիթեանի եւ պարագա-  
յից Հոգիներուն Համար, Կաթապետութեամբ Գեղչ.  
Տ. Նորայր Եպիսկոպոսի:

\* Կիր. 24 Նոյմ.— Ս. Պատարազը մատուցուե-  
ցաւ ի Ս. Գլխազիր: Ժամաբարն էր Հոգչ. Տ. Կիրեկ  
Ս. Վրդ Պարիկեան:

## ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Ընդհակադրութեամբ եւ օրհնութեամբ կ'արձանագրեմք 1968 տարւոյ ընթացքին Ս. Յակոբ-  
եանց Մշաբ Տոնաբինն եւ այլ Սրբապայրերու տրուած հետեւեալ բարեպաշտական նուէրները:

1.— Ս. Աթոռոյ Մայրապետ էլիզ  
Մոմենան կը նուիրէ Ս. Աստուածածնայ  
Տաճարին ինքնաձեռնադրած փուլլու սկիւնի  
ծածկոց մը:

2.— Ս. Աթոռոյ Մայրապետ էլիզ  
Մոմենան նորոգել տուաւ Ս. Գլխազրի ար-  
տաքին դրան երեսներէն մին՝ օստափով՝  
իր անձնական ծախքով:

3.— Տկն. Ազաւերի Սրապեան՝ Կ. Պոլ-  
սաքեանկ, կը նուիրէ կարմիր ազլասի վրայ  
սակեթել բանուած սեղանի ծածկոց մը Ս.  
Գլխազրի:

4.— Տկն. Եւանջիկ Տէր Թովհաննէս-  
եան, բնիկ Եօզղատցի, Պոլսաքեանկ, կը նը-  
ւիրէ վեց պղնձեայ փսքրիկ աշտանակներ եւ  
ասեղնադրած երկու քորփուրս:

5.— Տկն. Հայկանուշ Բարխուդարեան  
կը նուիրէ ասեղնադրած քորփուրս մը՝ իւ-  
րապատուկ յիշատակարանով մը:

6.— Տէր եւ Տկն. Գէորգ Մ. Լէպլէպճ-

եան կը նուիրեն Առաքելական Աթոռին մէջ  
կախուելու Ռուսական քրիսթայէ գոյնըդոյն  
կանթեղ մը, մասնաւոր յիշատակարանով  
մը:

7.— Տկն. Եղիսաբէթ Դանիէլեան, բնիկ  
Կեսարացի, Պոլսաքեանկ, կը նուիրէ մէկա-  
կան ինքնաձեռնադրած պուսաւոր կտաւեայ  
ծածկոցներ Ս. Յակոբայ Աւագ Խորանին,  
Ս. Մննդեան, Ս. Աստուածածնայ եւ Ս. Հը-  
րէշտակապետաց խորաններուն:

8.— Ազնիւ Մայրապետ Ղորղորեան կը  
նուիրէ Ս. Յակոբայ Տաճարին Անատու-  
հին խալի մը:

9.— Այրի Տկն. Լուսիա Թիւթիւնճեան,  
բնիկ Եղեռացի, վանքարեանկ, կը նուիրէ Ս.  
Գլխազրի ինքնաձեռնադրած խորանի ծածկոց  
մը:

10.— Վանքաքեանկ Քրիստի Տկն. Սիրա-  
ծին Գրիգորեան կը նուիրէ Ռեմէլէ Ս. Գէ-  
որգ եկեղեցւոյն Սեղանի կտաւեայ ծածկոց  
մը, իւրապատուկ յիշատակարանով մը:

ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Լուսաբարապետ Ս. Աթոռայ